ԻՐԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Մեղրի.- Արդէն յայտնի էր մի քանի օր առաջ Մեղրու շրջանի իշխանութեան, իրաւապահ մարմինների եւ Նիւվադի ազերիաբնակ գիւղի ղեկավարների հանդիպման մասին, ինչպէս նաեւ այն մասին, որ վերջիններս ընդհանուր ժողովում որոշում են կայացրել: Այժմ յայտնի են դարձել այդ որոշման կէտերը.

- Մեղրու շրջանի եւ Նիւվադի գիւղի ղեկավարների հանդիպումերկխօսութիւնը առաջարկում է տեղափոխել Հայաստանում կատարուելիք Սեպտեմբերի 21ի հանրաքուէից յետոյ:

- Եթէ Հայաստանի Հանրապետութիւնը մնայ միութեան կազմում, Նիւվադին նոյնպէս Հայաստանի հետ կը մնայ միութեան կազմում:

- Եթէ Հայաստանի Հանրապետութիւնը դուրս կը գայ միութիւնից, ապա նիւվադեցիները կնպրեն միութեան կազմում, մէկ այլ տեղ:

Ահա այդպիսի մի որոշում անորոշ եզրանյանգմամբ, որն աւելի շատ վերջնագիր է յիշեցնում: Ահա մեր անվճռականութեան եւ սեփական տարածքին տէր կանգնելու անկարողութեան եւս մէկ փաստ:

Կապան.- Ադրբեջանական Ախքենդ գիւղի կողմից վերջին շրջանում մշտապէս կրկնուող հրաձգութիւնը Յուլիսի 21ի գիշերը պատասխան ստացաւ: Դրա անմիջական արդիւնքը եղաւ այն, որ Կապան-Շիշկերտ ճանապարհին (երկու հանրապետութիւնների սահմանամերձ), պարբերաբար յայտնւում եւ քաղաքացիական տրանսպորտի անակնկալ ստուգումներ են կատարում 4րդ բանակի եւ ՕՄՕՆականների պահակախմբերը:

Անհանգստութիւն է նկատւում նաեւ Կապանում տեղակայուած զինուորական ստորաբաժանումներում: Անկայուն վիճակի մասին են վկայում զինուորների փախուստները ծառայութեան վայրից: Մի քանի օրուայ ընթացքում արդէն հինգ փախուստ է եղել Դաւիթ Բէկ եւ Եղվարդ գիւղերի մօտ տեղակայուած զօրամասերից:

Յիշեցնենք, որ վերջերս երկու կողմերի միջեւ բանակցութիւնների պայմանաւորուածութիւն էր ստեղծուել: Պայմանաւորուած օրը, Յուլիսի 22ին ադրբեջանական կողմը չներկայացաւ բանակցութիւններին, իսկ կէսօրից յետոյ 4րդ բանակի կողմից վերսկսուեց Կապանի հրետանային ռմբակոծութիւնը:

Այսօրուանից, զինուորական հրամանատարութեան համաձայնութեամբ, Ղազանչի գիւղի մօտ ստեղծուել է ուղեկալ՝ երեք տանկերի հսկողութեամբ:

Գորիս.- Արդէն մի քանի գիշեր է աւտոմատային եւ հրետանային մասսայական կրակոցների եւ ռմբակոծութիւնների են ենթարկւում Գորիսի շրջանի բոլոր սահմանամերձ գիւղերը: Ըստ երեւոյթին ազերիները ինչ-որ նպատակներ հետապնդելով փոխել են իրենց մարտավարութիւնը, իսկ մեր սահմանների պաշտպանութիւնն ստանձնած 7րդ բանակը -ստոյիկեան համբերութիւն- է ցուցաբերում իր -նախանձելի անտարբերութեամբ-:

Խոշոր տրամաչափի արկերի պայթիւններից տուժել են Կոռնիձոր, Խնածախ, Խնձորեսկ, Տեղ գիւղերի արօտավայրերը, դաշտերը: Արկեր պայթել են տնամերձ այգիներում եւ բնակելի տների կտուրների վրայ: Բարեբախտաբար զոհեր չկան:

Կոռնիձորում, առանձնատներից մէկի տնամերձ այգում, մօտ 2,5 մետր խորութեամբ, հողի մէջ է մխրճուել մի արկ, որը սակայն չի պայթել եւ շարունակում է մեծ վտանգ ներկայացնել:

Յուլիսի 20ին Երեւանից Գորիս են ժամանել համապատասխան մասնագէտներ արկը վնասազերծելու նպատակով:

Մի քանի օր առաջ յայտնի էր դարձել Կոռայկի ամառային արօտավայրերում կատարուած ազերիների աւազակային յարձակման մասին, որի ժամանակ ըսպանուել էին երկու հովիւներ՝ 1936 թուականի ծնուած Գաւրուշա Սիմոնեանը եւ 1941 թուականի ծնուած Միշա Գիմլուդեանը, առեւանգուել եւ Քելբաջար է տարուել 1600 գլուխ ոչխար: